

ԵՐԵՎԱՆԻ ՄԵԿԵՐՈՐԴ . ՏԱՐԻ

ՄԵԿԵ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мѣсякъ».

Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.

Մի քանի տարեկանը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(չացի կիրակի եւ տօն օրերից).

Թայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Թայտարարութիւնների համար վճարում են

իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ.

Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.

Հի Մ Ն Ա Գ Ի Ր Գ Ր Ի Գ Ո Ր Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

Տիկին Մինա Աբրահամեան իր որդիներնցով և Յովաննէս, Միքայէլ, Գերասիմ
նուբարեանները ցաւօք սրտի յայտնում են բարեկամներին և ծանօթներին, առաջինը
իրան թանգազին և անսովորաւոր ամուսնու, իսկ երկրորդները իրանց եղբոր՝

ԿՈՍՏԱՆԴ ՍԱՐԳՍԵԱՆ ԻՈՒԲԼՈՐԵԱՆՑԻ

վաղաժամ մահը, որը տեղի ունեցաւ յունվարի 20-ին, գիշերը ժամի 12 1/2-ին: Ամբիճքը
չորեքշաբթի, ամսին 22-ին, երեկոյեան ժամի 6-ին, իսկ թաղումը 23-ին, ժամի 10-ին,
իրանց սեփական տանից (Աւստրիական փողոց № 107) դէպի Թանգոյեան ս. Աստուածա-
ծին եկեղեցին (բէարական ուսումնարանի դիմաց Միքայէլեան փողոց) և այնտեղից դէ-
պի Նոյնիսանքի գերեզմանատունը:

1—2

ԲՈՎԱՆԴԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Համագումար ժողովի առիթով. — Ներքին
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայոց ներկայացումները. Յուրբ-
ներ և իրականութիւն. Նամակ Մօսկվայից.
Նամակ Վերին-Ադուլիսից. Ներքին լուրեր.
ԱՐՏԱԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կ. Պօլսի լրագրիչնե-
րից. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լու-
րեր. Հեռագրիչներ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.
— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ատրպատականի հայերի նոր
կանոնադրութիւնը.

ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԺՈՂՈՎԻ ԱՌԻԹՈՎ

Ներկայ յունվարի սկզբին Պետերբուր-
գում տեղի ունեցաւ մի համառուսական
ժողով, որ նուիրված էր անասնաբուժա-
կան խնդիրների ընկերութեան: Այդ ժողով-
ում շօշափվեցին բազմաթիւ հարցեր,
որոնք վերաբերում են և մեր Անդրկով-
կասին:

Մեր ազգաբնակչութիւնը, որի մի խոշոր
մասը զբաղված է անասնապահութեամբ,
չափազանց մեծ վնասներ է կրում անային
անասունների հիւանդութիւններից և կա-
րօտ է դեկավարող օգնութեան, որպէս զի
կարողանայ ազատվել վտանգաբեր պատա-
հարներից և հնարաւորութիւն ունենայ
զարգացնել իր անասնութեան այն ճիւղ-
երը, որոնք կապ ունեն անասնապահու-
թեան հետ:

Այդ ժողովում վերջնականապէս պարզ-
վեց և հաստատվեց, որ պատուաւորա-
ման միջոցով կարելի է մաքաւել անա-
սունների ժանտախտի, սիբիրախտի
և ուրիշ հիւանդութիւնների դէմ, որոնք
ներկայումս մեծ կորուստներ են անում
երկրի անասնապահութեան մէջ:

Պատուաստեցէք անասուններին ժան-
տախտի շիճուկը այնպէս՝ ինչպէս դուք

պատուաստում եք մարդկանց ծաղիկը, և
դուք ազատած կը լինէք ձեզ ժանտախտի
այն սուկայի կորուստներից, որ մինչև
այժմ ունէիք անասունների հիւանդու-
թիւններից:

Բայց ժանտախտ պատուաստելու գործը
նոր է և դեռ շատերին անծանօթ. ուստի
կարևոր է, որ անասնաբույժները ծանօթա-
նան պատուաստման եղանակի հետ, ու-
սումնասիրեն այն բոլոր պայմանները և
հանգամանքները, որոնք ազդում են այդ
նոր եղանակի աշտոյութեան վրա: Ահա այդ
պատճառով անհրաժեշտ է մի կողմից շա-
րունակել գիտական հետազոտութիւններ
անելը պատուաստման վերաբերութեամբ,
իսկ միւս կողմից անասնաբույժներին սովոր-
եցնել պատուաստման վերաբերեալ բոլոր
հմտութիւնները:

Համակրութեան արժանի է այն հան-
գամանքը, որ համառուսական ժողովը
որոշեց լայն և ընդարձակ կազմակերպու-
թիւն տալ այն օգնութեան, որ պէտք է
հասցնեն անասնաբույժները ազգաբնակու-
թեանը: Անասնաբույժների վրա պարտաւո-
րութիւն է դրվում ոչ թէ ձեւական կեր-
պով և միայն նեղ պաշտօնակարական տե-
սակէտից նայել իրանց գործավարութեան
վրա, այլ աւելի մօտ և սերտ յարաբերու-
թիւններ ստեղծել իրանց և ազգաբնակու-
թեան մէջ, պարտաւորացնել անասնաբույժ-
ներին, որ նրանք առհասարակ դեկավարող
հանդիսանան անասնապահական բոլոր
խնդիրներում. հրաւիրել յատուկ ինս-
պրուկտորներ, որ յանձն առնեն իրանց վրա
անասնական ցուցումներ անելու ազգաբնա-
կութեանը և բարձրել նրանց անասնա-
պահութեան վիճակը:

Համագումար ժողովը համոզվեց, որ
խնդիրների խմբական հաւաքական քննա-
դատութիւնը մեծապէս նպաստում է

այն չափով, ինչ չափով որ գտնում ենք այս
կանոնադրութեան մէջ:

Այստեղ հոգեւորական և աշխարհական միա-
սին են, անբաժան, պաշտօնակից, աշխատակից
և իրաւատէր: Զը կայ կաստա, չը կայ անհատի
իշխանութիւն, և որ գլխաւորն է—քանակութեան
թիւն: Առաջնորդն իր թեմական խորհրդի
հետ է, փոխանորդը՝ գաւառական խորհրդի
գործակալը իր երկու պաշտօնակիցների, քա-
հանան իր ծխական խորհրդի անդամների
Շինվում է թէ քանդվում, գնվում է թէ ծախ-
վում՝ այդ բոլորը կատարվում է ժողովրդից
ընտրված աշխարհական և հոգեւորական անձանց
գիտութեամբ և պատշաճաւոր թոյլտւութեամբ:
Ատրպատականի թեմի բոլոր գործերում այ-
նուեւեռ գեղեցիկ ներդաշնակութեամբ աշխա-
տանքի են հրաւիրվում հոգեւորական և աշխար-
հական տարրերը և առաջին ընտրութիւնների
հետեւանքներից և անձերից շատ բան է կախ-
ված:

Կանոնադրութիւնը բաժանված է հետեւեալ
ուժը գլուխների.

- 1) Հայոց ազգային-եկեղեցական հաստատու-
թիւնների և պաշտօնականների ընդհանուր իրա-
ւունքներն ու արտօնութիւնները.
- 2) Թեմական առաջնորդ.
- 3) Առաջնորդական տեղապահ.
- 4) Առաջնորդական փոխանորդներ.

նրանց բազմակողմանի մշակութեան: Զա-
նազան տեղերից ժողովված մարդիկ բե-
րում են իրանց բնական տեղերից այնքան
գիտողութիւնների պաշարներ և նպաս-
տում, որ այդ տեղերի պահանջները և
պայմանները ուշադրութեան առնված լի-
նէին թէ խնդիրների մշակութեան և թէ
վարչական կարգադրութիւնների անելու
ժամանակ: Երեք տարուց յետոյ կը կրկնվի
ժողովը և քննութեան կառնէ այն նոր
խնդիրները, որոնք առաջ կը դան երկրի
անասնապահական տնտեսութեան մէջ:

Յանկալի է, որ մեր կովկասեան մասնա-
գէտները և զիւղասնտեսները օգտվին
այդպիսի «դէպքերից»՝ ներկայացնելու ժո-
ղովներին երկրի կարիքները և պաշտպա-
նելու երկրի շահերը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄՆԵՐԸ

Երկուշաբթի, յունվարի 20-ին, Հայոց Դրա-
մատական ընկերութեան խումբը ներկայա-
ցրեց Սուրբատուի «Շղթան և» պիեսը և
վերջում «Արշակ Բ» պիեսի երկրորդ գործո-
ղութիւնը:

«Շղթաներ» պիեսի մէջ կան կենսական զը-
ծեր, կան հարցեր, որոնք ունեն ժամանակա-
կից նշանակութիւն, բայց և այնպէս դա այն
պիեսներից չէ, որոնք յարատւութիւն ունենա
հայկական բեմի վրա: Հեղինակը «շղթաներ»
ասելով աչքի առաջ ունի այն շղթաները, ո-
րոնք ծանրանում են մարդու վրա նրա անցած
յանցաւոր գործունէութիւնից: Անցեալը ջնջելը
հեշտ չէ, և կատարված սխալը ճշտում է մար-
դու ապագայի վրա: Կան սխալներ, որ չը պէտք
է կատարել:

Պիեսի բովանդակութիւնը հետեւեալն է. Վօ-
լընցիլի կինը թողնում է իր տղամարդուն և
փնտրում փոքրկալից կնիքի ան-
բարոյական և խայտառակ մարդկանց չրչա-
նում: Վօլընցիլը զբաղվում է իր փոքրիկ աղջ-
կայ կրթութեամբ: Եւ հանդիպում է մի հեղ
և սիրող օրիորդի, որի հետ սկսում է կենակ-
ցել, կեսնքը անցնում է խաղաղ և անվտու-
ն: Աղջիկը մեծանում է և աւարտում իր դպրո-
ցական կրթութիւնը: Տասնեկու տարի անց-
նելուց յետոյ նորից երևան է գալիս Վօլընցիլի
կինը և պահանջում է իր աղջկան: Տղամարդը
համարում է այդ պահանջը անկարելի, որով-
հետեւ նա չէ կարող հաշտվել այն մտքի հետ,
թէ իր աղջիկը պէտք է ընկնի իր փչացած

մօր հասարակութեան մէջ, Տիկին Վօլընցիլան
արդէն զղջացել է իր անցեալի համար, բայց
նա չէ կարողանում ազատվել մի սրիկայից,
որի հետ միասին նա գործում է եղել տարի-
ներ շարունակ: Անկարող լինելով նրա ճիւղա-
ներից ազատվել՝ տիկինը թոճաւորվում է և
այդպիսով վերջ գնում թէ կաշկանդող շղթա-
ներին և թէ իր կենսին:

Պիեսը թարգմանված է մաքուր լեզուով,
բայց չափազանց գրական ոճերով. մարդիկ
խօսում են ոչ սովորական խօսակցական լեզ-
ւով, այլ գրական բաներով: Այդ հանգամանքը
զարժնում է դերերը արհեստական Քեմական
լեզուն պէտք է մօտ լինի խօսակցականին:

Պիեսի մէջ տպաւորութիւն են գործում մօր
և աղջկայ տեսութեան, երկու ամուսինների
տեսակցութեան, Վօլընցիլի կնոջ և նրա կե-
նակցի հանդիպման, Վօլընցիլայի և նրան հա-
լածող սրիկայի կատաղի ընդհանրման, Վօլըն-
ցիլայի մահվան տեսարանների: Տիկին Սիրա-
նոյշ ուսումնասիրել էր իր դերը և հանդէս
բերեց մի հպարտ, ապրիլ սիրող, բայց տանջ-
ված և զղջացած կնոյ տիպը, որի մէջ կենդա-
նացել է մայրական զգացմունքը և օրինաւոր
կերպով ապրելու ցանկութիւնը: Տիկին Մայ-
սուրեան (Վօլընցիլի կենակից) սկզբում թույ-
ն էր և կարողացաւ ուժեղ կերպով հանդէս գալ
վերջին գործողութեան մէջ, երբ նա խօսում
էր Վօլընցիլայի հետ: Այդտեղ խօսում էին
անձնութիւններ, ազնութիւնը և անկեղ-
ծութիւնը: Տիկին Մեկեան (Վօլընցիլի աղ-
ջիկը) խաղում էր ոչ հաւատարմ կերպով. նա
տպաւորութիւն գործեց մօր հետ հանդիպման
տեսարանում, որտեղ նա մտաւ իր դերի մէջ:
Տիկին Անիլ (Վօլընցիլայի մայրը) չափազանց
ջանել էր ներկայացնում իրան. նա կարծես
Վօլընցիլայի մայրը չը լինէր, այլ նրա քոյրը
կամ աղջիկը: Պէտք է թէ գրիւն և թէ շար-
ժանները մօտեցնել հասակին: Տիկին Վարդու-
հի և Գուրաղեան իրանց տեղումն էին:

Տղամարդկանց դերերից ամենախոշորներն
էին Վօլընցիլի, որ կատարում էր Արեւեան, և
Պրօպրիլի, որ կատարում էր Պետրոսեան:
Եւ կարծում եմ, որ աւելի լաւ կը լինէր, եթէ
նրանք վերցրած լինէին միմեանց դերերը:
Պետրոսեանի համար կատարել հօր դերը աւելի
մօտ է նրա ամբողջական, իսկ Արեւեանի համար
Պրօպրիլի դերը, որտեղ երեսուսարդ կիրքը
դեռ չէ չիջել, թէ զգալի տարբերակ կարելի
էր: Պետրոսեանը չափազանց բարի էր,
իրեն սրիկայ, իսկ Արեւեանը չափազանց զբաղ-
ված՝ իր զգացմունքների արտայայտութեան
մէջ: Յարութեան ծերունի Նովոբոսանովի
դերում իր տեղումն էր:

Կան և բարեգործական բոլոր հաստատութիւն-
ները իրաւունք ունեն ձեռք բերելու շարժա-
կան գոյքեր և անշարժ կալուածներ, որպէս
իրաւաբանական անձինք, և այդ բոլոր կոյրերը
համարվում են ազգային-եկեղեցական անձնու-
թիւնի սեփականութիւն:

4) Ատրպատականի հայերի ազգային-եկեղե-
ցական գործերը կատարվում են թեմական
առաջնորդը և թեմական խորհուրդը:

5) Ատրպատականի թեմի կատարութիւնը,
հայոց եկեղեցու հաւանդ սովորութեան հա-
մաձայն, հիմնված է ընտրական սկզբունքի
վրա:

6) Թեմական առաջնորդին, հայոց եկեղեցու
կանոնների համաձայն, անորոշ ժամանակով
ընտրում է թեմի հայ ազգաբնակչութիւնը և
առաջարկում է ամենայն հայոց կաթողիկոսին
ի հաստատութիւն:

7) Ատրպատականի թեմի բոլոր ազգային
վանքերը, եկեղեցիները և կրթական ու բարե-
գործական հիմնարկութիւնները գտնվում են
թեմական առաջնորդի իշխանութեան ներքոյ,
որ սահմանափակվում է ամենայն հայոց կա-
թողիկոսի գերիշխանութեամբ և պատգամա-
ւորական ժողովի վերահսկողութեամբ:

Ապա հետեւում են պատգամաւորական ժո-
ղովի ընտրութեան վերաբերեալ մանրամասն
կանոններ և 45-րդ յօդուածով որոշվում է

Ներկայացուցումը տրված էր ի նպաստ տրվելին Միլիթերանի և Յարուկիւնեանի, որոնց մասնակցութեան յարգողները կողմից ընծաներ:

Մի ընդհանուր նկատողութիւնս Դերասանները շատ ցածր ձայնով են խօսում և նոյնիսկ առաջին կարգերի հանդիսականները չեն լսում դերասանների խօսածները. իսկ հետո կարգերում ոչինչ չէր լսվում: Յոթը ձայնով խօսելը չափազանց աննպաստ տպաւորութիւն էր գործում: Հասարակութեան չըջաններին յաճախ լսվում էին երկնոտ ձայներ, որոնք հրաւիրում էին դերասաններին բարձր խօսելու: Բայց լսող չը կար: Այդ հանգամանքի վրա պէտք է ուշադրութիւն դարձնել կրկնութիւնների ժամանակ: Դերասանների շատերը կրկնութիւնների ժամանակ ցածր են խօսում, առարկելով, որ բեմից բարձր ձայնով կը խօսեն, բայց դա սխալ է: Պէտք է սովորութիւն դարձնել բեմից բարձր ձայնով խօսելու, իսկ դա կարելի է կրկնութիւնների ժամանակ: Ներկայացման օրը այլ ևս ոչ է նոր ձևով խաղալ: Միայն շատ փորձված դերասանները կարող են գծել մի բան ներկայացման օրվայ համար: Բայց լաւ կը լինէր, եթէ մեր դերասանները սակաւ գրաւվէին փորձվածների առումն կրելուց:

Ինչպէս երկուշաբթի օրերը հայոց ներկայացման համար յայտարարութիւններ չեն տպվում այդ օրը լոյս տեսնող լրագիրներում: Դա մի անյարմարութիւն է, որը շատ հեշտ է վերաջնել:

Սիրող

ՏԵՆՈՐՔԵՆՈՐ ԵՒ ԻՐԱՎԱՆՈՒԹԻՒՆ
(Նամակ Ախալքալաքից)

Հեռաւոր հիւսիսում, Ֆինլանդիայի մի անհիւնում, մի փոքրիկ քաղաք կայ, Թավասթ-հուս (Tavastehus, Табастекус) անունով:

Այդ քաղաքը ընդամենը հինգ հազար բնակիչ ունի, ուրեմն մասնաւորապէս մեր Ախալքալաքի չափ:

Բայց ինչ էք կարծում, ընթերցող, քանի ուսումնարան կունենայ այդ քաղաքը:

Տասն և չորս հատ, ոչ աւել, ոչ պակաս: Այդ թիւի մէջ են մի ութ դասարաններն արական գիմնազիա, երկու օրիորդաց գիմնազիա, մի ուսուցչական սեմինարիա, երկու բարձրագոյն ժողովրդական դպրոցներ (ժողովրդական համալսարան), կիրական օրհն, ուղղիչ, բանտային ուսումնարաններ և այլն:

Այդ տասն և չորս ուսումնարաններում սովորում են գլխաւորապէս գիւղացիները և քաղաքացիները:

Այդ դեռ քիչ է. քաղաքում հրատարակւում են երկու հատ լրագիր, որոնց ընթերցողների թիւի մէջ են լաւէները, խոհարարութիւնները, կառավարանները: Ինտելիգենցիան էլ, ի հարկէ, իր կարգին:

Յետոյ, այդ քաղաքում կան թատրոն, երկու հիւանդանոց, չորս բաղնիք և տէլեֆոն, որով օգտվում են համարեա բոլոր քաղաքացիները: Տէլեֆոնով օգտվելու տարեկան արժեքն արժէ ընդ ամենը ինը ռուբլի...:

Յոտի և գրանիտի երկրում այդպիսի հրաշքներ, մեզ համար անհասկալի ցնորքներ...:

Ահա նայեցէք մեր չուրջը, մեր տխուր իրա-

կանութեանս: Համեմատեցէք Թավասթ-հուս մեր գաւառական քաղաքներից որի հետ ուղղում էք, թէ կուզ հէջ նոյն մեծութեամբ Ախալքալաքի հետ:

Ճիշտ է, մեր սարահարթում էլ 5—6 ամիս ձմեռ է լինում, երբեմն այնպիսի ձիւնախառն փոթորիկներ և մրրիկներ, որ, ըստ Պուշկինի, կարծում ես, թէ զդեռ են թաղում կամ վիճակի են մարդու տալիս (ստամանները): Բայց և այնպէս արեգակը երևում է թէ չէ՝ իսկոյն զգում ես հարաւի շունչը:

Թէ այդ տեսակետից և թէ իր սեահողով և այլ բնական պայմաններով մեր սարահարթը անհամեմատ աւելի է օժտված բնութիւնից՝ քան Ֆինլանդիան:

Բայց և այնպէս միթէ կարելի է համեմատել մեր թշուառ Ախալքալաքը երկնիկ Թավասթ-հուսի հետ...:

Տգէտ և մեծ մասամբ անդրադէտ, խաւար ժողովուրդ: Եւ, որ աւելի սոսկալի է, յոյս չը կայ, որ ներկայ պայմաններում այդ ժողովրդական մասնան առաջ ընթանայ առաջադեմութեան ուղիղ և բնական շաւղով...:

Ձը կան ընթերցարաններ, նպատակայարմար ներկայացումներ և ընթերցանութիւններ: Եւ մենք սոսկումով տեսնում ենք, որ մեր այլքի առաջ ժողովուրդը յետադիմում է բարոյապէս և մտաւարապէս, մասնաւոր 1896 հարաբար-տիկ թւականից յետոյ...:

Ապացոյց դրան—տեղական բանտը լցրած հայ մարդիկ, մեծ մասամբ երիտասարդներ, և նրանց գործած յանցանքները, որոնք արգասիք են միայն և միմիայն տգիտութեան և անկաւար իրաւար միջովայրի: Անթրոպոլոգիական, ժառանգական և ուրիշ թէօրիւնները հազիւ թէ պատճառ լինեն:

Տարինքն առաջ ես բախտ էի ունեցել լրա-գրութեան հարդրելու, որ Ախալքալաքի բանտում կայանաւորները չը կան: Իսկ ներկայումս 35 տգէտ ու խաւար անբախտներ են տառապում այնտեղ...:

Ահա ձեզ առաջադիմութիւն:

Ո՛չ թէ ընթերցանութիւնը մեզանում աստի-ճանաքար պահանջ չէ դարձում, այլ և նուա-զում է. իսկ ալֆօնսը՝ որքան ուզէք կ'անվում է:

Ահա ձեզ պերճախօս թուրք:

Ախալքալաքում և գաւառում, մօտ 60 հա-զար հայի մէջ, տարեկան տարածվում են հա-զիւ 6—700 վտիտ և էփանագին գրքեր, մօտ 100 ր. արժողութեամբ (հաստ գրքերի վերա-բերմամբ երբեմն բազառութիւններ լինում են). ամենաշատը մօտ 600 ր. արժողութեամբ էլ պարբերական հայերէն հրատարակութիւններ են տարածվում:

Իսկ օդի գաւառի 75 հազար ազգաբնակչու-թեան մէջ, ծախվում է տարեկան 12—15 հա-զար վեդրօ, մօտ 80—100 հազար ռուբլի ար-ժողութեամբ...:

Կարճ ասած՝ մօտ հազար լուրջ ընթեր-ցանութեան նիւթ (հաշւելով և գաւառի օտար-ազգիներին), իսկ հարկի հազար ռուբլու քայ-քայող, այլապէս թոյն...:

Ահա մեր կուլտուրականութեան աստիճանը: Սակայն չարունակե՛ք միայն մեր քաղաքի իրականութեան մասին:

Մենք հիւանդանոց չունենք, քաղաքային բժիշկ չունենք, և, որքան ցաւալի է խոստո-

նակով:

Թեմական խորհուրդը հսկում է թեմի բոլոր ազգային-եկեղեցական հաստատութիւնների և պաշտօնականների վարչական գործունէութեան վրա, քննում և որոշում է հիմնել նոր վան-ճեր, եկեղեցիներ, ազգային հասարակական դպրոցներ ու գրադարաններ, բարեգործական հիմնարկութիւններ և այլն. կազմում է բոլոր ազգային կրթական և այլ հիմնարկութիւններ և կանոնադրութիւններ և մտցնում նրանց մէջ փոփոխութիւններ. ժողովում պահում է շահեցնում է բոլոր թեմապետական հասոյթները. կատարում է ընդհանուր թեմական ծախ-սեր և առհասարակ վերջնական վճիռներ և կայացնում թեմի ընդհանուր տնտեսական հարցերի մասին, նշանակում է թեմական տե-սուչ թեմի բոլոր ազգային-կրթական հիմնար-կութիւններին վերահսկելու համար, հարկա-ւոր դէպքում նշանակում է վերաջնիւններ ազ-գային-եկեղեցական հիմնարկութիւնների գոր-ծերն ու հաշիւները վերաւարտագրելու համար, թոյլտուութիւն է տալիս հաստատութիւններ անել Աստղատակների թեմում և 30 թումա-նից աւելի ծախսեր անել վանքերի և եկեղե-ցիների վրա. հաստատում է իրանց պաշտօ-ններում և հրաժարեցնում է դպրոցների հոգա-բարձուներին, գործակալական խորհուրդների աշխատանքական անդամներին, երեսփոխներին և

վանել, մեր տգէտ ժողովուրդը կամ մինչև հիմա էլ բացասում է բժշկի և դեղերի նշա-նակութիւնը և դիմում է բախտախնդիր հէթմա-ներին (յիշեցէ՛ք Չանդուրա գիւղի դէպքը և վառած աթարի վրայով ցատկոտող չեքք հայ գեղջիկներին): Կամ միջոց չեն ունենում դեղ առնելու, բժշկին վարձատրելու. և մարդ-կային արարածները ձանձերի նման կոտոր-վում են անօգնական:

Մեր փողոցները սալած չեն, որի պատճա-ռով ամառը մեզ թօղն է խեղդում, իսկ գար-նան ու աշնանը՝ ցեխը...:

Սանիտարական — առողջապահական դրու-թիւնը անտանելի է: Բնական արարածները իրանց բնական պահանջները կատարում են քաղաքի ծայրերում, անասունների պէս բացօ-թեայ, և մարդկային կղկղաւքն է զարդարում մեր գեղեցիկ դաշտերը:

Մենք քաղաքում բուսականութիւն չունենք, ջուր չունենք:

Մեր երկրի նաւթը հեղեղում է համալսար-նային շուկան, այն ինչ՝ ոչ միայն մեր գիւղերն են իրանց լարիւնութեամբ թաղված անթա-ֆանցելի խաւարի մէջ, այլ և քաղաքի փողոց-ները, ուր հազիւ մի քանի ժամ գիւղերն են աղօտ վառվում են միայն 80 հատ խղճուկ լապտերներ...:

Սակայն մենք հարուստ ենք լեռնային գե-տակներով, որոնց ջրա-եկեղաբական էներ-գիան, փոփոխաբեր ալիքները, կամ, ինչպէս հիմա անուանում են, ռապիտալ ածուխը և կորչում է անօգուտ, որովհետև մենք նախա-ձեռնութեան ոգուց զուրկ ենք:

Եւ երբ թւում էք մեր պակասութիւնները, ծրագրեր էք տալիս և ցանկութիւն էք յայտ-նում, որ դրանք իրագործվեն գէթ 25—30 տարվայ ընթացքում, երբ պէտք է լրանայ էրզրումի մեծ դաղթի հարկերանակը,—մեր խելօք Օբլոմօվները ուսերը վեր են քաշում, ցնորքներ են համարում այդ բոլորը:

Բայց միթէ Թավասթ-հուսի օրինակը մեզ համար խրատական չէ:

Ճիշտ է, պատմական—քաղաքական ոգի-ն շատ է օգնել ֆինլանդացուն, զբնութեան խորթ որդուն, բայց մեծ դեր է խաղացել նա, իբ-րև կուլտուրական ոյժ, իր աշխատանքով, կամ-քով և համբերութեամբ. աւելի լաւ էր ասել—տոկոսութեամբ, և ոչ մեր բուժ համբերու-թեամբ:

Մենք, տեսնում էք, սեահողի վրա, հարա-ւային արեգակի ձառագայթների տակ, չենք կարողանում կամ, աւելի լաւ է ասել—չենք ցանկանում մի փոքր լուսաւորել մեր եզրօր խաւար ուղիղը, իսկ ֆինլանդացին հիւսիսային աղօտ արեգակի տակ, գրանիտից ոչ միայն ապրում է ճարում իր համար, այլ և փոքրիկ քաղաքներում անգամ բարձր ուսումնարաններ է բանում, թատրոններ է հիմնում, լրագիրներ է հրատարակում, տէլեֆոնի ցանց է անց կա-ցնում, և անհամեմատ աւելի ածան վճարով քան մեր Թիֆլիսում կամ Բազում...:

Պատճառն ինչ է, որ ֆինլանդացին կարճա-տև ամուսնով ընթացքում ապահովում է իր ապրուստը և օգտվում է քաղաքակրթութեան ամեն բարիքով:

Պէտք է մտածել այս պատճառի վրա: Ակնբեր է, որ ֆինլանդացիների բարօրու-

թեան ֆոկուսը թագնւած է մի ինչ-որ մոգա-կան ոյժի մէջ:

Ֆինլանդացիների բարօրութեան մոգական ոյժը թագնւած է յամառ, յարատև և արդիւ-նաւէտ աշխատանքի, ինսպրոգութեան և դէպի ուսումնի ու գիտութիւնը ունեցած բուռն աշ-րոյ մէջ:

Ահա եռանդի այն գումարը, որ գրանիտայ ժայռերի և քերծերի մէջ ծնում է ամեն տե-սակ բարօրութեան մոգական ոյժը:

Մենք, հարուստ բնութեան երես տուած և ինքեռ գաւառներս, չենք կարողանում օգտվել մեր երկրի անսպառ հանքային և այլ հարստու-թիւններից և նախանձում ենք զբնութեան խորթ որդի ֆինլանդացուն: Բայց եթէ վեր-ջինիս աշխատանքութիւնը, կուլտուրականութիւնը պատուաստվի մեր ժողովրդի մէջ, այն-պիսի հրաշքներ կը կատարվին մեր երկրում, որոնց մասին չէ էլ երազում ֆինլանդացին:

Բայց, աւաղ, դա դեռ իլլեզիա է, ցնորք է:

Աշխատենք, ընթերցող, ով ինչով կարող է, գէթ մասամբ իրականութիւն դարձնելու այդ ցնորքը...:

Սալիւսման

ՆԱՄԱՅ ՄՈՍԿՎԱՅԻՑ

Յունվարի 8-ին

Մօսկվայի հայ գաղութը հովիւրու համար կոչված են երկու քահանաներ: Աւելորդ է ա-սել, թէ զրանց բարոյական պարտականութիւ-նը որչափ աւելանում է այստեղ, մեր հարա-դատ աշխարհից, մեր անուշ հող ու ջրից հե-տու, շատ հետո մի տեղ...:

Բայց այդ երկու քահանաները, երկու հայ հերոսները, իրար հետ հաշտ ապրել չը գիտեն, մարդավայել վարվել չեն կարողանում, այն էլ հրաշք—եկեղեցուէս նրանք ոչ թէ իրար վրա տրտնջում են, ոչ թէ իրար յանդիմանում են անկատելի հասարակութեան կողմից. ոչ, նը-րանց անձնական չափերի կոբւր, նրանց ետերի ընդհարումը արտայայտվում է հրապարակով, ընդհանրութեան աչքի առաջ, սուրբ սեղանի գէմ, սրբութիւն տալու, հաղորդելու ժամին...:

Ծննդեան օրը պատարագի քահանան էմ. Նազարեանն էր. հետեաբար նա էլ պէտք է ժողովրդին հաղորդութիւն տար: Եւ ահա գա-լիս են ժողովրդից մարդիկ հաղորդվելու Նա-զարեան քահանայ բարձրանում է սեղանը՝ սրբ-բութիւնը տալու: Միւս քահանայ Կ. Պօպովը այդ տեսնում է թէ չէ՝ սկսում է կատարել ճիշ հանել, զարմանալ և սրբութիւն տուող քահա-նային «լիք», ճանգագալ խօսքերով հայոյնել...:

Թէ ինչու, որովհետև գաղութի ա մ է նա և ա ռ ու ս ու, որովհետև քաղաքի մէջին հաղորդութիւն պիտի տար ինքը, և ոչ ուրիշը...:

Այդ բաւական չէ:

Երեկոյեան, պատարագի այն ժամին, երբ օ-տարութեան մէջ մայրին խօսքին կարօտ ժո-ղովրդը անհամբեր սպասում է, թէ ինչ պի-տի խօս: Իր հոգեւոր հայրը, ինչ բարոյական խրատներ՝ պատշաճ այդ հանդիսաւոր օրվան՝ պիտի կարգայ,—դուրս է գալիս պատարագիչը և, ոգևորված, սկսում է խօսել. բայց ինչի մա-սին.—իր և իր ընկերոջ անհաշտ վարվելու, այդ օրը պատահած կռիւի, հայոյնաւոր մասին:

Ողորմելի քարոզ...:

Հ. Համբարձումյան

Թիւնը և բանային յանձնվում է թեմական խորհրդի քահանային, որին խորհուրդն ըն-տրում է իր միջից չորս տարի ժամանակով: Այս ուղղութեամբ որոշված են իւրաքանչիւր ինստանցիայի իրաւասութեան և պատասխա-նատութեան սահմանները և ժողովրդի իր ե-կեղեցական ազգային հիմնարկութիւններին վերաբերեալ իրաւասութիւնը:

Շուտով կը տպագրվի այս կանոնադրու-թիւնն ու կառավարկի հասարակական զնա-դատութեան, որտեղից կերեայ, թէ նրա նը-աստիճանի նպատակայարմար և հայոց եկեղե-ցու ոգուն համապատասխան լինելը Երկու տարվայ փորձը ցոյց կը տայ նրա պակաս-թիւններն ու առաւելութիւնները. կը լրացվի և կը ստեղծվի մի օրինակելի կանոնադրու-թիւն փորձական կեանքի վրա հիմնված, և այդպիսով վերջ կը տրվի գործերի արեւելան ոգուն և ուղղութեան և կը իրթէ սերունդներ օրինականութեան և պարտաճանաչութեան գեղեցիկ սահմաններում:

Շնորհաւորում ենք Աստղատակների թեմի հայ ժողովրդին սոյն գեղեցիկ կաթողիկոսա-կան պարգևը. մաղթում ենք բոլոր անձանց և հիմնարկութիւններին կատարեալ աղոթութիւն:

Իրանցի

